# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք, Արմավիրի մարզ, գ. Արագած, Հեռ. 0231-6-62-02 ,
aragats.armavir@mta.gov.am

N 171
*03 նոյեմբեր 2016թ.*

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն Ղահրամանյան*

*Արմավիրի մարզի Արագածի գյուղապետարանը Ձեզ է ներկայացնում Արագած համայնքի ղեկավարի 2016 թվականի հոկտեմբեր ամսվա կայացրած որոշումները: Կարգադրություններ չեն արձակվել:*

*Առդիր՝ 2 որոշում*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ

*Կատ.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-62-02 aragats.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 41-Ա

## ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ և 17-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագածի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 28-ի թիվ 2 որոշումն ու Արագած գյուղի բնակիչ Սոֆիա Ասատուրի Հովհաննիսյանի դիմումը՝ որոշում եմ.*

*1. Արմավիրի մարզի Արագած գյուղի բնակիչ Սոֆիա Ասատուրի Հովհաննիսյանին պատկանող սեփական տանը տալ թիվ 1 փողոց N 108 հասցե-համարանիշը:*

*2. Սույն որոշումը ներկայացնել Անշարժ գույքի Արմավիրի մարզային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:*

*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ

2016 թ. հոկտեմբերի 26
գ.Արագած

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-62-02 aragats.armavir@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 42-Ա

### ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասով. որոշում եմ՝*

*1. Ձևավորել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 02-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:*

*2. Աշխատակազմի քարտուղար Ն. Արսենյանին հանձնարարել 3 օրյա ժամկետում նախագծում ընդգրկված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ հիմնավորումներ և նախահաշիվներ:*

*3. Աշխատակազմի քարտուղար Ն. Արսենյանին՝ նիստի օրակարգի նախագծի, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը նիստը սկսելուց առնվազն 1 օր առաջ ներկայացնել համայնքի ղեկավարին՝ ավագանու անդամներին տրամադրելու համար:*

*4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ

2016 թ. հոկտեմբերի 27
գ.Արագած